ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1197-Լ

«21» նոյեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի պահանջներով, Վաղարշապատ համայնքի ավագանու անդամ Վարդան Գրիգորյանի եղբոր հոգեհանգստի համար ծաղկեպսակ ձեռք բերելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2025թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 35000 /երեսունհինգ հազար/ դրամ փոխանցել ԱՁ Մանուկ Անդրեասյանին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11984

«21» Հոկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

«ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 110-Ն որոշումները և «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2025 թվականի նոյեմբերի 19-ի N 7927).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2025 թվականի նոյեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Վաղարշապատ համայնքի Երևան-Արմավիր-Թուրքիայի հանրապետություն Մ5, 16.050 կմ (Մանուշյան փողոց) հասցեում այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն (Թույլտվություն N 335 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1199Ա

«31» Հոկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

«ԻՄԻՋ Մ. Գ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 110-Ն որոշումները և «ԻՄԻՋ Մ. Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2025 թվականի հոկտեմբերի 19-ի N 7928).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ԻՄԻՋ Մ. Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2025 թվականի նոյեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Վաղարշապատ համայնքի Երևան-Արմավիր-Թուրքիայի հանրապետություն Մ5, 15.150 կմ (Մանուշյան փողոց) հասցեում այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն (Թույլտվություն N 334 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1200Ա

21 հոկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 3 <<ԾԻԾԵՌՆԱԿ>>, ԹԻՎ 4 <<ՁՆԾԱՂԻԿ>>, ԹԻՎ 7 <<ԶՎԱՐԹՆՈՑ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ, <<ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԵՎ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 25.12.2024թ. թիվ 114-Ն և 09.09.2025թ. թիվ 93-Ն, 25.12.2024թ. թիվ 115-Ն որոշումները, Վաղարշապատի համայնքապետարանի կրթության և մշակույթի բաժնի պետի 20.11.2025թ. զեկուցագիրը, ինչպես նաև հաշվի առնելով Վաղարշապատի համայնքապետարանի սոցիալական աշխատողների ուսումնասիրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզներ և երաժշտական դպրոց հաճախող երեխաների ուսման վարձի և խնամքի համար գանձվող վարձավճարների գծով արտոնություններից օգտվող թվով 12 /տասներկու/ երեխաների ցանկը՝ համաձայն սույն որոշման անբաժանելի մաս հանդիսացող հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ВАГАРШАПАТСКОЙ ОБЩИНЫ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1201Ա

21 Հոկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ն. Ստեփանյան փողոցի թիվ 6 տան բնակիչ Ավագ Հովհաննեսի Հովհաննիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ն. Ստեփանյան փողոցի թիվ 6ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 28.10.2025թ. կնքված թիվ 6767 գրանցամատյանով գրանցված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 040119LYVVQP/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ն. Ստեփանյան փողոց, թիվ 6/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12024

21 հոկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Ժիլբերտ Երեմիայի Բաղումյանի լիազորված անձ Թելմիկ Սահակի Խոսրովյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 13.10.2025թ. կնքված թիվ 6603 գրանցամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04022AY9BHFG / տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ, 9-րդ փողոց, թիվ 16 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Թ Ի Վ 15034

25 Հունվարի 2025թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻ՝ 22.06.1994 ԹՎԱԿԱՆԻ N 15 ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱԿՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 27.1 կետերի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Չարենց 4Ա/11 հասցեի բնակչուհի Էվելինա Ռաֆիկի Արզումանյանի դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության պատգամավորների Էջմիածնի քաղխորհրդի գործկոմի՝ 22.06.1994 թվականի N 15 նիստում ընդունված Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի 4Ա շենքի 11 բնակարանը սեփականաշնորհելու վերաբերյալ ակտում կատարել փոփոխություն՝ ըստ բնակարանի սեփականաշնորհման հիմք հանդիսացած փաստաթղթերի ընտանիքի կազմում նշված «Կարաբուլուտյան Խաչիկ Անդրանիկի» անունը համապատասխանաբար փոփոխել «Կառաբուլության Խաչիկ Անդրանիկի»:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ВАГАРШАПАТСКОЙ ОБЩИНЫ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY VAGHARSHAPAT COMMUNITY
04440367

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1204Ա

27 Հոկտեմբերի 2025թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ռ.ՊԱՏԿԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 43 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-ն որոշման և ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 24.10.2025թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ.Պատկանյան փողոցի թիվ 43 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ.Պատկանյան փողոցի թիվ 43 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.0734հա, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 11-րդ գոտում:
3. Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԼՔԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1205Ա

27 նոյեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 23 ՇԵՆՔԻ ԹԻՎ 30 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 2 ԲԱՑՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 23 շենքի թիվ 30 բնակարանի բնակիչ Հակոբ Իվանի Հակոբյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն և Անժելա Վարդանի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 21.03.2012թ. տրված թիվ 21032012-04-0072 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 17.11.2025թ. կազմված հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 23 շենքի թիվ 30 բնակարանին կից ինքնակամ կառուցված 30քմ մակերեսով կցակառույցի և ինքնակամ բացված թվով 2 բացվածքի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 23 շենքի թիվ 30 բնակարանին կից ինքնակամ կառուցված 30քմ մակերեսով կցակառույցը և ինքնակամ բացված թվով 2 բացվածքը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 21 659 / քսանմեկ հազար վեց հարյուր հիսունինը / ՀՀ դրամ:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ВАГАРШАПАТСКОЙ ОБЩИНЫ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
06440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1290Ա

29 նոյեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 23 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-ն որոշման և ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0244 / կողմից 18.11.2025թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դավիթ Անհաղթի փողոցի թիվ 23 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:

2.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Դավիթ Անհաղթի փողոցի թիվ 23 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.01հա, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 12-րդ գոտում:

3.Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1207-Ա

27 դեկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏ» ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել «Արես Գրուպ 22» ՍՊԸ տնօրեն, ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի Արցախի փողոցի թիվ 3 տան բնակիչ Կարեն Մանասերի Հարությունյանը, «Արես Գրուպ 22» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N16012025-04-0081, տրված՝ 16.01.2025թ., N16012025-04-0079, տրված՝ 16.01.2025թ. և «Գևորգ Մյասնիկի Թորոսյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0525/ կողմից 24.11.2025թ. կազմված հողամասի հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի «Վաղարշապատ» ԳԿՏ տարածքում գտնվող /կադաստրային ծածկագրեր՝ 04-002-1042-0014, 04-002-1042-0016/, 15.0035հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության ցածրարժեք հողատեսքը՝ վարելահողը ավելի բարձրարժեք հողատեսքի՝ պտղատու այգու /կորիզավոր/ փոխադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի «Վաղարշապատ» ԳԿՏ տարածքում գտնվող /կադաստրային ծածկագրեր՝ 04-002-1042-0014, 04-002-1042-0016/, 15.0035հա ընդհանուր

մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության ցածրարժեք՝ վարելահող հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք՝ պտղատու այգի /կորիզավոր/ հողատեսքի:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1208Ա

27 հոկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Կիմ Քաջիկի Ուդումյանի լիազորված անձ Վիլիկ Հովակիմի Ավագյանի դիմումը Կիմ Քաջիկի Ուդումյանին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 25032015-04-0007 տրված՝ 25.03.2015թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 19.09.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011QAM4WZH, 04011P3BBV53, 04011GRCUY3L, 04011FLESV5C, 04011P3DF3YV, 04011TK7GWZ5/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի 1-ին թաղամասի թիվ 586 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 598/2 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 598/1 հողամաս,

Առանձնացվող հատված 3-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 592 հողամաս,

Առանձնացվող հատված 4-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 586 հողամաս,

Առանձնացվող հատված 5-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 580 հողամաս,

Առանձնացվող հատված 6-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 574 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1309Ա

«27» Հոկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 24.09.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 981Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎՐԻՊԱԿՆԵՐԻ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 24.09.2025 թվականի «Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի Թորամանյան փողոցի թիվ 2/3 հասցեում Արփենիկ Հովհաննեսի Պետրոսյանի կողմից առանց համապատասխան թույլտվության և քաղաքաշինական փաստաթղթերի մանսարդային հարկում առանձնացված բնակելի տարածքների կառուցման շինարարական աշխատանքներ իրականացնելու համար պատասխանատվության ենթարկելու և տուգանք նշանակելու մասին» թիվ 981Ա որոշման մեջ թույլ տրված վրիպակները ուղղել՝ որոշման մեջ նշված «700 000 /յոթ հարյուր հազար/» բառերի փոխարեն կարդալ «750 000 /յոթ հարյուր հիսուն հազար/» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12/104

27 Հոկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Երևան քաղաքի Կուրղինյան փողոցի թիվ 4 շենքի թիվ 6 բնակարանի բնակիչ՝ Գայանե Գուրգենի Նաջարյանի դիմումը իրեն, Հռիփսիկ Անուշավանի Նաջարյանին, Գուրգեն Վաչագանի Նաջարյանին, Լուսինե Գուրգենի Նաջարյանին և Կարինե Գուրգենի Նաջարյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 08042024-04-0067 տրված՝ 08.04.2024թ., «Ջիվան Հարությունյան Արսենի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 17.10.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04022ZFDU9VN, 04022MH2PKMA/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Մասիսի փողոցի թիվ 9/2 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ, Բարեկամության փողոց, թիվ 84/11 կիսակառույց,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ, Բարեկամության փողոց, թիվ 84/10 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1211Ա

23 Հոկտեմբերի 2025թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՍԻՍԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԷՋՈՒՄ ՆՇՎԱԾ 35.3ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՀԵՍՏԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի Կուրղինյան փողոցի թիվ 4 շենքի թիվ 6 բնակարանի բնակիչ՝ Գայանե Գուրգենի Նաջարյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն, Հռիփսիկ Անուշավանի Նաջարյանին, Գուրգեն Վաչագանի Նաջարյանին, Լուսինե Գուրգենի Նաջարյանին և Կարինե Գուրգենի Նաջարյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թից 08042024-04-0067 տրված՝ 08.04.2024թ./ Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Մասիսի փողոցի թիվ 9/2 հասցեում գտնվող անշարժ գույքի իրավունքների պետական գրանցման վկայականի շինությունների բնութագիր էջում նշված 35.3քմ մակերեսով պահեստի նպատակային նշանակությունը՝ բնակելիի, իսկ գործառնական նշանակությունը բնակելի տան փոփոխելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Մասիսի փողոցի թիվ 9/2 հասցեում գտնվող անշարժ գույքի իրավունքների պետական գրանցման վկայականի շինությունների բնութագիր էջում նշված 35.3քմ մակերեսով պահեստի նպատակային նշանակությունը փոփոխել բնակելիի, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի տան, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1219Ա

27 Հոկտեմբերի 2025թ.ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի 2-րդ փակուղու թիվ 6ա տան բնակիչ Միհեր Գևորգի Ավետիսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /19.09.2025թ. տրված թիվ 19092025-04-0043 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 27.10.2025թ. թիվ Կ-27102025-04-0009 որոշում / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 34/3 հասցեում գտնվող 0.0091հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշմամբ հաստատված հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 34/3 հասցեում գտնվող 0.0091հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատումից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1213Կ

27 Հոկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 625 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով Արաքս համայնքի Արտիմետ գյուղի Ռաֆֆու փողոցի թիվ 49 հասցեի բնակիչ Գոռ Արմենի Գրիգորյանի դիմումը՝ պարզվեց, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 06.03.2025թ. տրված թիվ 06032025-04-0036 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի թաղամասի թիվ 625 հասցեում գտնվող հողամասի մակերեսը կազմում է 0.0405հա:

Համաձայն «Աիդա Բաղրամյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0339/ կողմից 30.09.2025թ. կազմված հատակագծի հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0.0405հա, ինչից պարզ է դառնում որ վերը նշված հողամասը կադաստրային քարտեզում սխալ է արտացոլված որի հետևանքով ճշտված հատակագծերը կադաստրային քարտեզում տեղադրելիս ըստ կադաստրային քարտեզի առաջանում է գույքային համադրություն համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ, սակայն փաստացի բնության մեջ համադրություն և ընդհանուր օգտագործման տարածքներ առկա չեն:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն փաստը, որ հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և չեն առաջացնում սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 29.04.2021թ. «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին» թիվ 698-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ի 42-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի թաղամասի թիվ 625 հասցեում գտնվող փաստացի զբաղեցրած 0.0405հա մակերեսով հողամասի սահմանները՝ համաձայն ներկայացված հատակագծի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1214-Ն

«27» նոյեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ. ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և ելնելով անհրաժեշտությունից.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նվազեցնել՝

1.1. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> հոդվածը /հոդ. 4111/ 30000.0 հազ. դրամ:

1.2. Աղբահանման /բաժին 05, խումբ 1, դաս 1/ <<Տրանսպորտային նյութեր>> հոդվածը /հոդ. 4264/ 9300.0 հազ. դրամ:

1.3. Համայնքային զարգացման /բաժին 06, խումբ 2, դաս 1/ <<Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ>> հոդվածը /հոդ. 4112/ 2400.0 հազ. դրամ, <<Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում>> հոդվածը /հոդ. 4252/ 1000.0 հազ. դրամ, <<Տրանսպորտային նյութեր>> հոդվածը /հոդ. 4264/ 2000.0 հազ. դրամ, <<Այլ հարկեր>> հոդվածը /հոդ. 4822/ 1000.0 հազ. դրամ և <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> հոդվածը /հոդ. 5113/ 4850.0 հազ. դրամ:

1.4. Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների /բաժին 06, խումբ 6, դաս 1/ <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> հոդվածը /հոդ. 4111/ 600.0 հազ. դրամ:

1.5. Թանգարանների և ցուցասրահների /բաժին 08, խումբ 2, դաս 2/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 4500.0 հազ. դրամ:

1.6. Նախադպրոցական կրթության /բաժին 09, խումբ 1, դաս 1/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 40500.0 հազ. դրամ:

1.7. Արտադպրոցական դաստիարակությունների /բաժին 09, խումբ 5, դաս 1/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 2500.0 հազ. դրամ:

2. Ավելացնել՝

2.1. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <<Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ>> հոդվածը /հոդ. 4112/ 23000.0 հազ. դրամ:

2.2. ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում>> հոդվածը /հոդ. 4269/ 5000.0 հազ. դրամ և <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> հոդվածը /հոդ. 5113/ 4850.0 հազ. դրամ:

2.3. Աղբահանման /բաժին 05, խումբ 1, դաս 1/ <<Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ>> հոդվածը /հոդ. 4112/ 8850.0 հազ. դրամ և <<Այլ հարկեր>> հոդվածը /հոդ. 4822/ 450.0 հազ. դրամ:

2.4. Համայնքային զարգացման /բաժին 06, խումբ 2, դաս 1/ <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> հոդվածը /հոդ. 4111/ 4400.0 հազ. դրամ:

2.5. Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների /բաժին 06, խումբ 6, դաս 1/ <<Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ>> հոդվածը /հոդ. 4112/ 600.0 հազ. դրամ:

2.6. Հանգստի և սպորտի ծառայությունների /բաժին 08, խումբ 1, դաս 1/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 13500.0 հազ. դրամ:

2.7. Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոնների /բաժին 08, խումբ 2, դաս 3/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 6500.0 հազ. դրամ:

2.8. Այլ մշակութային կազմակերպությունների /բաժին 08, խումբ 2, դաս 4/ <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> հոդվածը /հոդ. 4239/ 4000.0 հազ. դրամ:

2.9. Նախադպրոցական կրթության /բաժին 09, խումբ 1, դաս 1/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 26000.0 հազ. դրամ:

2.10. Արտադպրոցական դաստիարակությունների /բաժին 09, խումբ 5, դաս 1/ <<Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին>> հոդվածը /հոդ. 4511/ 1500.0 հազ. դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12154

28 Նոյեմբերի 2025թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻ՝ 04.07.1994 ԹՎԱԿԱՆԻ N 16 ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱԿՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 27.1 կետերի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոցի 47 շենքի 57 բնակարանի բնակիչ Արամ Վալերիկի Անտոնյանի դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության պատգամավորների Էջմիածնի քաղխորհրդի գործկոմի՝ 04.07.1994 թվականի N 16 նիստում ընդունված Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոցի 47 շենքի 57 բնակարանը սեփականաշնորհելու վերաբերյալ ակտում կատարել փոփոխություն՝ ըստ բնակարանի սեփականաշնորհման փաստաթղթերում ընտանիքի կազմում նշված «Անտոնյան Էդուարդ Վալերիկի» անունը համապատասխանաբար փոփոխել «Անտոնյան Էդուարդ Վալերիի»:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1216Ա

01 դեկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20.10.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1111Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի ղեկավարի 20.10.2025թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները Արմինե Ռաֆիկի Խաչատրյանի, Լիանա Գրիգորի Աբրահամյանի և Ռոզա Գրիգորի Աբրահամյանի սեփականությունը համարելու մասին» թիվ 1111Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1)հիմնական և եզրափակիչ մասերում նշված «0.0044հա» բառը փոփոխել «0.0018հա» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ВАГАРШАПАТСКОГО МУНИЦИПАЛИТЕТА
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1217-Ա

01 դեկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա. Շիրվանզադեի փողոցի թիվ 7 տան բնակիչ Ռուզաննա Գագիկի Հարությունյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 30.10.2025թ. կնքված թիվ 9685 սեղանամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04022A6RXWST/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ, 28-րդ փողոց, թիվ 35 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1218Ա

01 դեկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի թիվ 7 շենքի թիվ 21 բնակարանի բնակիչ Միսակ Գարեգինի Պետրոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Թումանյան փողոցի թիվ 25ա հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 2354530 տրված 30.08.2007թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011FDRDAVL/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Հ. Թումանյան փողոց, թիվ 23 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12190Ա

01 դեկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա. Մանուկյան թաղամասի թիվ 7 տան բնակիչ Ղուլի Միխայելի Զարգարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի թաղամասում /նախկին Պետ-Տնկարան/ գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 13.11.2025թ. կնքված թիվ 10245 սեղանամատյանով գրանցված անշարժ գույքի մասի առուվաճառքի պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011VJUA9PU/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սասունցի Դավթի թաղամաս, 3-րդ փողոց, թիվ 5 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ВАГАРШАПАТСКОЙ ОБЩИНЫ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1390Ա

01 դեկտեմբերի 2025թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Արարատյան փողոցի թիվ 14 տան բնակիչ՝ Սուսաննա Գևորգի Շաղոյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 08082025-04-0033 տրված՝ 08.08.2025թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 20.11.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր 04011QF69PYM, 04011FW9CFUE/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ս. Մանուկյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ս. Մանուկյան փողոց, թիվ 31 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ս. Մանուկյան փողոց, թիվ 31/5 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ